



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 19 ՅՈՒՆԻՈՒՆ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

*Երգեցէք տեառն երգ նոր ձայնիւ ցլնծութեամբ,
որ խոնարհեցաւ ի Հայրական ծոցոյ փրկել զարարածս.
օրհնութիւնք նրմա յաղթական երգով:*

ԱՊՈԹՔ

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, մեծ եւ սքանչելի եւ Դուռն, եւ անգն-նելի եմ Քու գործերդ: Յոյց տուր Քու փրկարար կամֆդ, եւ թող Քու փառփիղ լոյսը ծագի աշխարհիս բոլոր ծայրերը: Դուռն եւ միակ ու ճշմարիտ Աստուածը: Փառք ու պատիւ Քեզի կը վայելէ, Տէ՛ր: Ընդունի՛ր մեր երկրպագութիւնը մաքուր սրտով եւ խոնարհ հոգիով: Ապրեցուր մեզ Քու կամֆիդ համաձայն, որպէսզի մեր կեանքով փառաւորենք Քեզ, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

Մոր երգ երգեցէ՛ք Տիրոջ,
 Տիրոջ ի պատիւ երգեցէ՛ք, ամբողջ աշխարհ:
 երգեցէ՛ք Տիրոջ, օրհնաբանեցէ՛ք անոր անունը,
 անոր բերած փրկութիւնը աւետեցէ՛ք օրէ օր:
 Ազգերուն մէջ անոր փառքը պատմեցէ՛ք,
 անոր սփանչելի գործերը պատմեցէ՛ք բոլոր ժողովուրդներուն:
 Մեծ է Տէրը, եւ ամէն օրհներգութեան արժանի,
 բոլոր աստուածներէն վեր՝
 ինքն է միայն պաշտամունքի արժանի:
 Ժողովուրդներու պաշտած աստուածները ոչնչութիւն են,
 մինչդեռ Տէրը երկինքի Արարիչն է:
 Փառք եւ մեծվայելչութիւն կը նառագայթեն անկէ,
 իր գօրութիւնն ու գեղեցկութիւնը կը լեցնեն իր սրբարանը:
 Հոչակեցէ՛ք, ով ժողովուրդներ աշխարհի,
 Տիրոջ փառքն ու գօրութիւնը հոչակեցէ՛ք:
 Հոչակեցէ՛ք Տիրոջ փառաւոր անունը,
 ընծայով եկէ՛ք անոր տանարը:
 Երկրպագեցէ՛ք Տիրոջ, իր շքեղ սրբարանին մէջ,
 եւ դողացէ՛ք իր դիմաց, համայն մարդիկ աշխարհի:
 Բոլոր ազգերուն ըսէ՛ք "Տէրը ինքն է Թագաւորը".
 ինք երկրագունդը հաստատեց այնպէս՝ որ չսասանի բնաւ,
 եւ ինք ժողովուրդները պիտի դատէ՝ ուղղամտութեամբ:
 Թող երկինքը ուրախանայ, երկիրը՝ ցնծայ,
 ծովը իր լման բովանդակութեամբ թող շառաչէ հրնուանփով:
 Դաշտերը ծառ ու ծաղիկով թող զուարթանան,
 եւ անտառին ծառերը թող որ ցնծութեամբ երգեն Տիրոջ առջեւ,
 որ ահա կու գայ, կու գայ աշխարհը դատելու:
 Անիկա արդարութեամբ պիտի կառավարէ աշխարհը,
 իր նշմարտութեամբ պիտի կառավարէ ժողովուրդները:

ԳՈՀԱԲԱՆՆԵՑԷՔ ՏԻԵՉԵՐՔԻ ԱՐԱՐԻՉ ԹԱԳԱՒՈՐԸ

Հեղափոխական Սաղմոս մըն է 96-րդ Սաղմոսը: Չնայած նմանօրինակ է 95-րդ Սաղմոսին, բայց անոր մէջ կայ նոր մանրամասնութիւններ: 95-րդ Սաղմոսն ալ երգի մասին էր, բայց շար աւելի փոքր խումբի մը հետ կապուած, Աստուծոյ ժողովուրդին: 96-րդ Սաղմոսը այս սահմանը կ'անցնի եւ աւելի կ'ընդարձակուի դէպի ամբողջ աշխարհ: Սաղմոս մը, որ կը ներկայացնէ Աստուծոյ վեհութիւնը, գործութիւնը, գեղեցկութիւնը եւ արդարութիւնը: Այս բոլորի դիմաց մարդուն երկիւղածութիւնը եւ Աստուծոյ հովանիին փակ ըլլալու կոչը, նախ-քան Անոր գալուստը դարելու աշխարհը: Կը սկսի կոչով մը, նոր երգ երգեցէք ի պատիւ Տի-րոջ, ոչ միայն Իսրայելը, այլ ամբողջ աշխարհը: Եւ ինչո՞ւ ամբողջ աշխարհը, որովհետեւ նախ այդ երգը Տիրոջ ի պատիւ երգ է, Տէրը փառաբանելու երգ է, ուստի Տէրը ըլլալով բոլորի Տէրը, բոլորին հրաւեր կոչ նոր երգ երգելու: Երկրորդ, օրհնաբանութեան երգ, Տիրոջ բերած փրկութեան, որ դարձեալ ամէն օր պէտք է աւելել այդ մասին: Բոլոր ազգերու մաջ Անոր փառքը պատմելու, եւ Անոր կարարած սքանչելի գործերուն մասին: Այսօր մենք, պզտիկ գործ մը կ'ընենք բայց այնպէս մը կը ներկայացնենք, որ մենք ենք որ կանք: Երբ գԱստուած կը պաշտենք, պէտք է ի մտի ունենանք Անոր վեհութիւնը, մեծութիւնը, գործութիւնը, օրհներգութեան արժանի, բոլոր աստուածներէն վեր, նկարի ունի հեթանոսական չաստ-ուածութիւնները: Ինք է միակ պաշտամունքի արժանի, որովհետեւ միւս աստուածները ոչնչութիւն են: Ամէն անգամ երբ պաշտամունքի կը կանգնին Տիրոջ առջեւ ի մտի պէտք է ունենանք այս երեւոյթը Աստուծոյ գործութեան, գեղեցկութեան, Անոր փառքին եւ մեծվա-յելութեան, որ ամբողջ Իր սրբարանը կը լեցնէ: Նաեւ կը յիշեցնէ հետեւեալը. հռչակեցէք Տի-րոջ փառքն ու գործութիւնը: Ընծայով եկէք անոր փառքը: Հին Կրակարանեան հասկացո-ղութեամբ ընծաները անոնք էին, որ Տէրը Ինք պատուիրեց Մովսէսին, իսկ Նոր Կրակարան-եան հասկացողութեամբ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. "Ձեր անձերը ընծայեցէք Աստուծոյ գոհասեղանին", որ կը նշանակէ, Աստուծոյ իմ սիրտս, իմ մտածումներս ընծայելու, իմ սէրս Իրեն փալու: Յովհաննէս Աւետարանիչ Առաքեալը պիտի ըսէ. "Սիրենք գԱստուած, այնպէս ինչպէս Ինք մեզ սիրեց": Երկրպագեցէք Տիրոջ: Դողացէք Իր դիմաց: Այսպէղ դողացէք, ոչ սարսափի իմաստով, այլ՝ երկիւղածութեամբ: Այլ խօսքով, նկարի ունենալով Տիրոջ վեհութիւնը, փառքը, գործութիւնը, որուն նոյնիսկ Սերովքէներն ու Քերովքէները իրենց դէմքը կը ծածկէին: Հեղափոխական բացատրութիւն է որ կու փան եկեղեցւոյ հայրերը, երբ կը ներկայացնեն ըսելով, երբ խոնարհութեամբ Տիրոջ ներկայութեամբ կու գանք, ապա այդ խոնարհ սիրտը որպէս ընծայ է որ կ'ընդունի Տէրը, իսկ երբ հպարտութեամբ կը մտնենք Անոր սրբարանէն ներս, ապա պարսպ ձեռքով է որ կը ներկայանանք: Մէկ այլ ուրիշ յիշեցում, որ տէրը ինքն է Թագաւորը, Ինքն է Արարաիչը, Ինքն է Դարաւորը, որ պիտի դարձնէ ժողովուրդները ուղղա-մտութեամբ: Այս ուրախութիւնը նաեւ ամբողջ սրեղծագործութիւնը կը դրսեւորէ, որովհետեւ ան եւ անհամբեր կը սպասէ այդ ազապագրումին: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. "Ամբողջ սրեղծագործութիւնը երկունքի մէջ կը հառաչէ, եւ կը սպասէ ազապագրումի" Հռոմայեցիս 8:22: Անոնք եւս թող որ ցնծութեամբ երգեն, որովհետեւ ահա Տէրը կու գայ դարելու աշխարհը: Առաջին առիթով եկաւ փրկելու աշխարհը, այս անգամ որ պիտի գայ, պիտի գայ Իր փառքով, ամպերու վրայ բազմած, դարելու արդարութեամբ եւ ճշմարտութեամբ: